ՄԽԻԹԱՐԻ ՈՒ ՆԵՐՍԷՍԻ ՀԱՅՐԻԿԸ



ՍՈՒՐԷՆ ՎԼԱԴԻՄԻՐԻ ԱՆՏՈՆԵԱՆ
(1962-1994)

Զագլիկեցի Սուրիկի հետ ծանօթացանք Քարվաճառի մայրուղուց Ծաղկասար (Չիչակլի) բարձրանալիս: Կարճահասակ, կապոյտ աչքերով, շիկահեր երիտասարդ էր: Մի քանի խօսք փոխանակելուց յետոյ մտերմացանք: Նա միանգամայն վստահութիւն էր ներշնչում: Լեռնային դժուարին կաւանով վեր էինք բարձրանում եւ Սուրիկը կարծես չէր քայլում, այլ մի վերամբարձ ուժ տանում էր նրան: Յոգնեցի եւ սղբիւրի մօտ խնդրեցի փոքր-ինչ շունչ քաշել:

Հրետանու մայոր, դիւիզիայի հրամանատար Սուրէն Վլադիմիրի Անտոնեանը, պիտի հետագային ինձ համար պարզուէր, որ Գրադի Ժորայի աջ թեւն է: Այդ օրերին նա Օմարի լանջերին որսում էր թշնամու հրակնետը եւ մեր կողմ կրակը ուղղորդում դրանց վրայ: 10 օր անց իմացայ, որ զոհուել է:

Ծնուել է 1962ի Օգոստոսի 27ին, ուսուցիչների ընտանիքում: Աւարտել է Հաթերքի միջնակարգ դպրոցը եւ 1988ին փայլուն կերպով վերջացնելով Երեւանի Պոլիտեխնիկ հաստատութեան քիմիատեխնոլոգիական կրթաճիւղը՝ մերժել ասպիրանտուրայում մնալու առաջարկը, վերադարձել Արցախ եւ աշխատանքի անցել Քիմիական Ֆիզիկայի հաստատութեան Ստեփանակերտի մասնաճիւղում:

Շուտով թողնում է այդ աշխատանքը եւ վերադառնում հայրենի գիւղ եւ մասնակից դառնում ազգային ազատագրական պայքարին: 90 թուականի Մարտին, Ականաբերդում (Ումուդլու) տեղատրուած ՕՄՕՆը գերում է Սուրիկին եւ ամիսուկէս պահում Շահբուլաղի (Տիգրանակերտ) բանտում: Անասելի տանջանքների են ենթարկում եւ մէկ-մէկ քաշում մօրուքի մազերը: Աղուան Կիրակոսեանի վկայութեամբ, Սուրիկն իրեն տղամարդու պէս է պահել, չի ընկճուել եւ նոյնիսկ ծաղրել է թուրքերին: Երբ վերադառնում է, հայրը խնդրում է, որպէսզի տունը մնայ, զոյգ որդիների, կնոջ մօտ, մանաւանդ չի հասցրել ապաքինուել: Սուրիկը պատասխանում է.- «Ղարաբաղը թողնենք ուրիշի՞»:

Չապաքինուած, ձեռնափայտով վերադառնում է ընկերների մօտ: Նշանակւում է դիւիզիոնի հրամանատար: Նա համարւում է ականանետների հիմնական մասնագէտներից մէկը բանակում:

Սուրիկը առօրեայում շատ համեստ ու առաքինի մարդ էր: Ահա Դաշնակցութեան գումարտակի դասակի հրամանատար Դաւիթ Մանուկեանի վկայութիւնը. «Մարտերից յետոյ Մամիկոնի հետ իջանք Սուրիկենց մօտ: Սուրիկն ասաց.- «Տղանե՛ր, յոգնած էք, հաց կերէք, քնէք, նորից կը բարձրանաք»: Հաց ուտելուն համաձայն էինք, քնելուն՝ ոչ: Ուտելուց յետոյ գուլպաները հանեցինք եւ դրեցինք կօշիկների վրայ: Շատ յոգնած էինք, եւ աչքներս կպաւ: Կէս ժամ յետոյ արթնացանք եւ տեսանք գուլպաներս լուացած, դրուած կօշիկների վրայ: Զարմացանք: Տղաները զգացնել տուեցին, որ Սուրիկն է արել: Անյարմար զգացինք եւ միաժամանակ յուզուեցինք ընկերոջ արարքով»:

94ի Մարտի 18ին ականանետի ականից զոհուեց մայոր Սուրէն Անտոնեանը: Նրա դին հողին յանձնեցին Ստեփանակերտում:

Աշոտ Պետրոսեան